ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ

(«ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերության կողմից կազմակերպվող *«Promo_222»* անվամբ խաղարկության կանոնների վերաբերյալ)

ք. Երևան 10 փետրվարի 2026 թվականին

1. Սույն կանոնների մեջ օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1.1. **Ընկերություն** – «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերություն /ՀՎՀՀ՝ 00868357, գրանցման համար՝ 282.110.06506/ 2009-08-04, գտնվելու վայրի հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Զավարյան Փ., 57/4, էլ. հասցե՝ info@fnet.am/.

1.2. **Կայք** - https://www.fnet.am/;

1.3. **Խաղարկություն** - Ընկերության կողմից մարքեթինգային նպատակներով իրականացվող գովազդային վիճակախաղ.

1.4. **«222»** - Խաղարկության պրոմո կոդը ***/այսուհետ՝ նաև Պրոմո կոդ/***, որի հայտնելը Մասնակցի կողմից պարտադիր պայման է Խաղարկությանը մասնակցելու համար.

1.5. **Մասնակից** – Սույն Կանոններով սահմանված չափանիշներին բավարարող և Խաղարկության ժամանակահատվածում նախատեսված գործողությունները կատարած բաժանորդ.

1.6. **Բաժանորդ** – Ֆիզիկական անձ, ով հանդիսանում է Ընկերության ծառայություններից օգտվող

1.7. **Ինֆլյուենսեր** – Երրորդ անձ, ում սոցիալական էջերում և ում միջոցով իրականացվելու է Խաղարկության ուղիղ եթերը և արդյունքների ամփոփումը.

1.8. **Շահում** – Սույն Կանոնների 3-րդ կետով սահմանված մրցանակային ֆոնդերը.

1.9. **Կանոններ** - Սույն փաստաթղթով սահմանվող դրույթներ, որոնք կարգավորում են Խաղարկության կազմակերպման և անցկացման կարգն ու պայմանները:

2. Խաղարկության ժամկետները.

2.1. Խաղարկությունը մեկնարկելու է 11 փետրվարի 2026 թվականին, ժամը 10:00-ից, և ավարտվելու է 11 մարտի 2026 թվականին, ժամը 24:00-ին:

2.2. Խաղարկության ամփոփումը տեղի է ունենալու 20 մարտի 2026 թվականին՝ ժամը 20:00-ին:

3. Մրցանակային ֆոնդ

3.1. Խաղարկության շրջանակներում խաղարկվում են հետևյալ մրցանակները՝

3.1.1. **Ուղևորություն դեպի Եգիպտոս՝ 2 անձի համար** – 1 հատ (ներառյալ ավիատոմսերը և կեցությունը հյուրանոցում, որի մանրամասները և ժամկետները որոշվում են Ընկերության կողմից),

3.1.2. **Հեռուստացույց** – 1 հատ,

3.1.3. **PlayStation խաղային համակարգ** – 1 հատ,

3.1.4. **«Երևան Պարկ»-ի տոմսեր (2 անձի համար)** – 10 հատ:

3.2. Շահումները չեն կարող փոխարինվել դրամական համարժեքով:

3.3. Ընկերությունը հանդիսանում է միայն Մրցանակային ֆոնդը տրամադրող կողմ: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Մրցանակային ֆոնդի որակի, տեխնիկական անսարքությունների կամ ծառայությունների մատուցման թերությունների համար: Մրցանակների հետ կապված երաշխիքային սպասարկումն իրականացվում է արտադրողի կամ ծառայություն մատուցողի կողմից՝ իրենց կանոններին համապատասխան:

4. Մասնակցության նախապայմանները և կարգը.

4.1. Մասնակից դառնալու համար Բաժանորդը պարտավոր է Խաղարկության ժամանակահատվածում կատարել հետևյալ գործողությունները **միաժամանակ**՝

4.1.1. Խաղարկության մեկնարկի պահից բաժանորդագրվել Ընկերության ինտերնետային ծառայություններին՝ ընտրելով 7500 ՀՀ դրամ և ավելի բարձր արժեքով փաթեթ **կամ** գործող Ինտերնետ ծառայությանը ավելացնել TV ծառայություն (անցում կատարել այլ փաթեթի),

4.1.2. Բաժանորդագրման պահին բանավոր կամ գրավոր հայտնել **«222»** Պրոմո կոդը:

4.2. Պրոմո Կոդը չնշելու դեպքում, անկախ բաժանորդագրության փաստից և սակագնային փաթեթի արժեքից, Բաժանորդը չի համարվում Մասնակից և չի ընդգրկվում խաղարկության ցուցակում:

4.3. Պրոմո կոդը հայտնելու պարտականությունը կրում է բացառապես Բաժանորդը:

4.4. Մասնակից կարող են լինել միայն 18 տարին լրացած անձինք:

4.5. Մրցանակային ֆոնդը հանձնվում է բացառապես այն անձին, ում անունով կնքված է բաժանորդային պայմանագիրը: Մրցանակային ֆոնդը ստանալիս Մասնակիցը պարտավոր է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ: Եթե Մասնակցի փաստացի տվյալները չեն համապատասխանում Ընկերության բազայում առկա տվյալներին, ապա Ընկերությունն իրավունք ունի մերժել Մրցանակային ֆոնդի հանձնումը:

4.6. Խաղարկության օրվա դրությամբ Մասնակցի բաժանորդագրությունը Ընկերության բազաներում պետք է լինի ակտիվ:

5. Մասնակցության սահմանափակումներ.

5.1. Խաղարակությանը չեն կարող մասնակցել Ընկերության աշխատակիցները և նրանց ու Ինֆլյուենսերի ընտանիքի անդամները (ծնող, ամուսին, զավակ, քույր/եղբայր):

5.2. Խաղարկությանը չեն կարող մասնակցել այն Բաժանորդները, ովքեր մինչև Խաղարկության մեկնարկի օրը արդեն իսկ հանդիսացել են Ընկերության Բաժանորդ և օգտվել են 7500 ՀՀ դրամ և ավելի բարձր արժեքով փաթեթից կամ այնպիսի փաթեթից, որին ավելացված է նաև TV ծառայություն:

6. Անձնական տվյալներ և այլ համաձայնություններ.

6.1. Մասնակցելով Խաղարկությանը, այսինքն՝ կատարելով 4.1 կետում նշված գործողությունները, Մասնակիցը տալիս է իր անվերապահ համաձայնությունը առ այն, որ՝

6.1.1. Իր անձնական տվյալները մշակվեն Ընկերության կողմից:

6.1.2. Իր անձնական տվյալները (Անուն, ազգանուն, հայրանուն և այլն) փոխանցվեն Ինֆլյուենսերին՝ խաղարկությունն իրականացնելու նպատակով:

6.1.3. Շահող ճանաչվելու դեպքում իր անունը, ազգանունը, սոցիալական ցանցի օգտանունը և սոցիալական ցանցում առկա լուսանկարները հրապարակվեն Ինֆլյուենսերի և Ընկերության սոցիալական էջերի ուղիղ եթերում, հրապարակումներում, «Story» և «Reels» բաժնում և Կայքում:

6.1.4. Մասնակցել Մրցանակային ֆոնդի հանձնման գործընթացի լուսաբանմանը ֆոտո/վիդեո նկարահանման միջոցով և թույլատրել այդ նյութերի հրապարակումը Ընկերության և Ինֆլյուենսերի սոցիալական էջերում և Կայքում՝ առանց ժամանակային և տարածական սահմանափակումների և առանց լրացուցիչ վարձատրության:

7. Խաղարկության ընթացքը և հաղթողների որոշումը.

7.1. Խաղարկությունն իրականացվում է Ինֆլյուենսերի սոցիալական էջում՝ ուղիղ հեռարձակման միջոցով:

7.2. Հաղթողները որոշվում են պատահականության սկզբունքով, այդ թվում, բայց չսահմանափակվելով, պատահական ընտրության միջոցով

7.3. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում սոցիալական հարթակների տեխնիկական խափանումների, ուղիղ եթերի ընդհատումների, ինտերնետ կապի որակի կամ այնպիսի հանգամանքների համար, որոնք տեղի են ունեցել Ընկերության կամքից անկախ:

7.4. Եթե շահող Մասնակցի հետ հնարավոր չի լինում կապ հաստատել (զանգահարելով Պայմանագրում նշված հեռախոսահամարին) 3 (երեք) անգամ անընդմեջ, Ընկերությունը իրավունք ունի չեղարկել տվյալ մասնակցի հաղթանակը և խաղարկել մրցանակը կրկին, որի վերաբերյալ Ընկերությունը Կայքում կատարում է համապատասխան հայտարարություն:

7.5. Հաղթող Մասնակիցը պարտավոր է Մրցանակային ֆոնդը ստանալու նպատակով ներկայանալ Ընկերության գլխամասային գրասենյակ՝ ք. Երևան, Զավարյան փ. 57/4, Խաղարկության օրվանից հաշված 15 օրվա ընթացքում: Նշված ժամկետում չներկայանալու դեպքում Մասնակիցը զրկվում է Մրցանակային ֆոնդը ստանալու իրավունքից, և Ընկերությունն իրավունք է ստանում տնօրինել մրցանակային ֆոնդը սեփական հայեցողությամբ:

7.6. Մրցանակային ֆոնդը ստանալու համար հաղթող Մասնակիցը պարտավոր է ստորագրել Մրցանակային ֆոնդի հանձնման-ընդունման ակտ: Նշված ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում Մասնակիցը զրկվում է Մրցանակային ֆոնդը ստանալու իրավունքից, և Ընկերությունն ազատվում է Մրցանակային ֆոնդը տրամադրելու պարտավորությունից:

8. <u>Եզրափակիչ դրույթներ.</u>

8.1. Խաղարկության արդյունքները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

8.2. Ընկերությունն իրավունք ունի Խաղարկության ցանկացած փուլում արգելել Մասնակցի մասնակցությունը կամ չտրամադրել Մրցանակային ֆոնդը, եթե հիմնավոր կասկածներ կան, որ Մասնակիցը խախտել է սույն Կանոնները, տրամադրել է կեղծ տվյալներ կամ կիրառել է անազնիվ մեթոդներ՝ մրցանակային ֆոնդը ստանալու նպատակով:

8.3. Մրցանակային ֆոնդի հանձնման հետ կապված հարկային պարտավորությունները կրում է Ընկերությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.4. Ինֆլյուենսերի և Ընկերության հարաբերությունների կարգավորումը դուրս է սույն Կանոնների կարգավորման շրջանակներից և նրանց միջև հարաբերությունները կարող են կարգավորվել միմյանց միջև կնքվող պայմանագրի միջոցով:

8.5. Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնել Խաղարկությունը կամ փոփոխել դրա ժամկետները՝ անհաղթահարելի ուժի ազդեցության (ֆորս-մաժոր) հանգամանքների, այն է՝ երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհ, պատերազմ, ռազմական և (կամ) արտակարգ դրություն, սահմանների փակում, քաղաքական հուզումներ, գործադուլներ, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերի հետևանքով, որոնց մասին Ընկերությունը չէր կարող իմանալ սույն Կանոնները հրապարակելու պահին: Խաղարկության դադարեցման և անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքի վերաբերյալ Ընկերությունը հնարավոր սեղմ ժամկետում և տեխնիկական հնարավորության դեպքում կատարում է համապատասխան գրառում իր Կայքում:

8.6. Սույն Կանոններից բխող բոլոր վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

8.7. Ընկերությունն իրավունք է ունի միակողմանիորեն փոփոխել սույն Կանոնները՝ կանոնների փոփոխված տարբերակը հրապարակելով Կայքում: